ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՀԵՌՈՒՍՏԱԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 070.422
ԳՄԴ 76.032
Հ 539

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Խմբագիր՝ Մուշեղ Հովսեփյան
Հեղինակներ՝ Նաղաշ Մարտիրոսյան, Քրիստինե Ալագուլյան, Նանե Վարդանյան, Աստղիկ Ավետիսյան, Վանիկ Հակոբյան

Հ 539 «**Հեռուստաժուռնալիստի վարպետություն**» դասընթացի ծրագիր-ուղեցույց /Կազմ.՝ Ն. Ն. Մարտիրոսյան և ուրիշներ: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 48 էջ:

Ուղեցույցում ներկայացված են լրագրողական գործունեության տեսական-ճանաչողական հիմնական սկզբունքներն ու մեթոդները, մեդիատեքստի կառուցման յուրահատկությունները:

Նախատեսված է «Հեռուստաժուռնալիստի վարպետություն» դասավանդողների, ինչպես նաև լրագրողական գործունեության հմտություններն ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 070.422
ԳՄԴ 76.032

ISBN 978-5-8084-2073-1

© ԵՊՀ հրատ., 2016
© Կազմողի համար, 2016

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագիրը նախատեսված է Ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողների համար, ովքեր արդեն յուրացրել են ժուռնալիստիկայի և հեռուստաժուռնալիստիկայի հիմունքները:

Դասընթացի նպատակն է ուսանողին փոխանցել գործնական հմտություններ և գիտելիքներ հեռուստաարտադրանքի ստեղծման յուրահատկությունների, թեմատիկ-կառուցվածքային տարբեր ձևաչափերի, ժանրային առանձնահատկությունների և տեսաձայնաշարային նյութ պատրաստելու տեխնոլոգիական գործընթացների վերաբերյալ:

Դասընթացի համար առաջարկվող առանցքային մոտեցումը 4 C-երի բանաձևն է: C տառով սկսվող անգլերեն չորս բառերի այս համադրությունը բնորոշում է հեռուստանյութին ներկայացվող հիմնական պահանջները՝ ճշգրտություն (correctness), պարզություն, հստակություն (clarity), հակիրճություն (conciseness) և գույն (color): Այսինքն՝ հեռուստատեսային նյութերը, որոնք պատրաստելու է ուսանողը երկու կիսամյակի ընթացքում, պետք է լինեն բովանդակային և ձևային իմաստով ճշգրիտ, պարզ և հասկանալի, տեսաձայնաշարային տեղեկատվության պահանջներին համահունչ, լսարանի աչքի և ունկի համար գրավիչ, դինամիկ և գունեղ:

Դասընթացի ավարտին ուսանողը ձեռք կբերի համապատասխան հմտություններ և կկարողանա գաղափարներ փնտրել՝ փորձելով դրանք գրագետ ու հետաքրքիր էկրանավորել: Նա սեփական նյութերի օրինակով կհամոզվի, թե որքան մեծ վնաս կարող է կրել բովանդակությունը, եթե կաղում է ձևաչափը, կկարողանա առավել վարժ և նպատակային կիրառել հեռուստատեսային արտահայտչամիջոցները՝ միաժամանակ սովորելով արագ կողմնորոշվել թիմային աշխատանքում:

Հաշվի առնելով այն, որ ուսանողն արդեն տիրապետում է տարբեր ժանրերով հեռուստանյութ պատրաստելու ոչ միայն տեսական, այլև գործնական որոշ գիտելիքների և հմտությունների, այս դասընթացի շրջանակներում տրվող հանձնարարությունները նախընտրելի է կատարել հետևյալ կերպ. դասին քննարկվում են հաջորդ պարապմունքին ներկայացվելիք նյութի հնարավոր թեման (եթե չկա թեմա, ապա՝ փնտրելու և գտնելու մեթոդներն ու «տարածքները»), պոտենցիալ հերոսների, թե-

մային «մոտ կանգնած» փորձագետների ու մասնագետների ընտրությունը, գաղափարի իրագործման հնարավորությունները, ստեղծագործական լուծումներն ու բովանդակային որոշ հարցեր: Հավաքագրված տեղեկատվությանը հեռուստատեսային տեսք հաղորդելու մեթոդները, հեռուստամտածողությանն առնչվող այլ թեմաներ քննարկելն առավել արդյունավետ ու նպատակային է արդեն հանձնարարությունը ներկայացնելու օրը: Այսինքն՝ հեռուստատեսային աշխատանքի վերլուծությունը (ինչպե՞ս սկսել նյութը, ինչպե՞ս միավորել կադրից դուրս խոսքն ու ձայնային կտորները կամ տեսաձայնաշարային նյութի մյուս բաղադրիչները, ինչպե՞ս մոնտաժել) դասախոսն իրականացնում է նյութը դիտելուն զուգահեռ, ինչն ավելի պատկերավոր է դարձնում ասելիքը:

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է պարզորոշ պատկերացնի ստեղծագործական արդյունավետության հասնելու ճանապարհը:

Դասը վարելու մեթոդները: Դասախոսն ազատ է դասը վարելու իր մեթոդներում, տեսաձայնաշարային նյութին ծանոթացնելու իր մոտեցումներում և կարող է այս ծրագրի շրջանակներում «ազատ տեղաշարժվել»: Այդուհանդերձ, նախընտրելի է, որ այս դասընթացն ունենա որոշակիորեն մշակված «բաղկացուցիչների» ամբողջություն, որը կարող է կազմվել խմբի դասախոսի կողմից: Օրինակ՝ կարելի է դասը սկսել «մտքի գրոհով». ուսանողը ներկայացնում է նախորդ շաբաթվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները: Այս վարժանքը երկու խնդիր է լուծում. ուսանողը հնարավորություն է ունենում բազմաթիվ լուրերից առանձնացնել կարևորն ու անհրաժեշտը, համառոտագրել և մատուցել լսարանին: Երկրորդ, բարձրաձայն ներկայացնելով լրահոսը՝ ուսանողը սկսում է տեղում որսալ սեփական սխալները, ինչպես նաև աստիճանաբար տիրապետում է բանավոր հաղորդակցման հմտություններին: Պարտադիր բաղկացուցիչներից կարող է լինել նաև դասընթացի շրջանակներում, տվյալ օրվա թեմայով ու հանձնարարության բնույթով պայմանավորված, խաղ-վարժանքների, թրեյնինգների, մտավարժանքների կազմակերպումը: Դրանք կօգնեն զարգացնել և կոփել բանավոր խոսելու, ասելիքը գրագետ կառուցելու հմտությունները:

Դասերին պարբերաբար հրավիրվում են հյուրեր հեռուստաալորտից, կազմակերպվում այցելություններ հեռուստաընկերություններ և տա-

բաբնույթ հաղորդումների նկարահանման տաղավարներ: Կիսամյակի ընթացքում, դասերից դուրս ևս, կարող են կազմակերպվել հանդիպումներ ոլորտի առաջատար մասնագետների հետ:

Հանձնարարությունների կատարման ժամկետները, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, կարող են փոփոխվել (դասախոսը, խմբի կողմից նյութն ընկալելու առանձնահատկություններով պայմանավորված, կարող է ավելի երկար կանգ առնել այս կամ այն հանձնարարության կամ թեմայի վրա): Ավելին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խմբագրումն ու վերախմբագրումը շատ կարևոր են հմտություններն ամրապնդելու համար, նույն ժանրով կամ նույն թեմայի շուրջ աշխատելու ևս մեկ հնարավորություն ստեղծելը ցանկալի է, և կարելի է կազմակերպել այն՝ այլ աշխատանքներին նվիրված ժամանակի հաշվին:

Գնահատման կարգը: Առաջին կիսամյակի ընթացքում երկու անգամ անցկացվում է ստուգում (յուրաքանչյուրը՝ առավելագույնը 9 միավոր): Կիսամյակն ամփոփվում է ստուգարքով: Ստուգարքի գնահատականը (առավելագույնը՝ 20 միավոր) ձևավորվում է երկու միջանկյալ ստուգումների հանրագումարով, որին գումարվում է 0-ից 2 միավոր՝ ներկայության համար (9+9+2=20): Երկրորդ կիսամյակի ընթացքում երկու անգամ անցկացվում է միջանկյալ ստուգում՝ յուրաքանչյուրը՝ 4 միավորանոց համակարգով: Ավարտական քննությանը տրվում է առավելագույնը 10 միավոր և 0-ից 2 միավոր՝ ներկայության համար (4+4+2+10=20):

Դասախոսը կարող է կիրառել նաև հեռուստանյութն առանձին տարրերով գնահատելու սկզբունքը: Առաջաբան, վերջաբան, ձայնաշար, տեսաշար, սինքրոն, սթենդ-ափ, նյութի այս բաղադրիչները համադրելու կարողություն, նորությունություն, փաստերի հավասարակշռություն, բովանդակային հագեցվածություն, հարցադրումներ, զրույցին հետևելու վարպետություն, լսելու կարողություն, բանավոր խոսք և այլն: Այս մեթոդն օգնում է գնահատելու ուսանողի հեղինակած նյութի որակական կողմը՝ միաժամանակ ցույց տալով, թե որ տեղերում են նրանք առավել շատ թերացել կամ՝ հակառակը:

Դաս 1. Ներածություն

Առաջին դասը սկսվում է ուսանողների հետ ծանոթությամբ, որն իրականացվում է հատուկ ձևաչափով: Յուրաքանչյուր ուսանող 2 րոպեի ընթացքում պետք է պատմի իր մասին: Այնուհետև խոսքը տրվում է հաջորդ ուսանողին: Վարժանքի ընթացքը (հնարավորության դեպքում) նկարահանվում է, որից հետո անցկացվում են դիտում և քննարկում: Այս վարժությունը հենց առաջին դասից օգնում է ձևավորելու հեռուստաժուռնալիստի համար ամենակարևոր հատկություններից մեկը՝ մնալ հանձնարարված ձևաչափի և տևողության սահմանում՝ բովանդակային իմաստով միաժամանակ սովորելով տրված ժամանակն արդյունավետ օգտագործել: Այս վարժանքն ունի տարատեսակներ, որոնց ընտրության մեջ դասախոսն ազատ է:

Տնային առաջադրանք:

Նկարահանել 10 կադրից բաղկացած տեսաշար, որը կունենա հրապակ ասելիք, կներկայացնի որևէ գաղափար, կցուցադրի գործողություն կամ կհաղորդի տեղեկություն:

Գրականություն

1. Тур Клас, Книга идей для преподавателей журналистики, Москва, 2006, стр. 10-20.

Դաս 2. Կադր և տեսաշար, մոնտաժ

Դասը սկսվում է տնային առաջադրանքի ներկայացմամբ: Ուսանողների տեսանյութերի օրինակով դասախոսն անդրադառնում է կադրին ներկայացվող բովանդակային և տեխնիկական պահանջներին, վերլուծում կոմպոզիցիան, տեսախցիկների շարժումները, առաջանցումներն ու ետանցումները (zoom in, zoom out), համայնապատկերները (panorama), հեռուստատեսային այլ արտահայտչամիջոցների գրագետ կիրառման սկզբունքները: Այդ արտահայտչամիջոցների շարքում, որպես ամենաառանցքային, անհրաժեշտ է առանձնացնել մոնտաժը:

Հենց այս համատեքստում դասախոսն անդրադառնում է կադրի պլաններին, կադրային մոնտաժի ընդհանուր օրինաչափություններին, մոնտաժային հնարքներին, կադրավորմանը, սցենարին:

Տնային առաջադրանք:

Հանձնարարվում է գրական որևէ ստեղծագործությունից հատված կամ լրագրողական տեքստ կադրավորել: Ուսանողն իր ընտրած կամ դասախոսի հանձնարարած պարբերությունը դարձնում է էկրանային պատմություն՝ հստակ նշելով կադրերի պլանները, տևողությունը, մոնտաժման առանձնահատկությունները, ներկադրային մոնտաժի հնարքները (առաջանցում, հետանցում, համայնապատկեր):

Գրականություն

1. **Соколов А. Г.,** Монтаж: телевидение, кино, видео, учебник, часть первая, второе издание, Москва, 2005.
2. **Утилова Н. И.,** Монтаж, учебное пособие для студентов вузов, Москва, 2004.

Դաս 3. Տեսաշարի և ձայնաշարի համադրություն, սցենար

Դասը սկսվում է տնային առաջադրանքի ստուգմամբ: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դասի երկրորդ հատվածը նվիրվում է տեսաշարի և ձայնաշարի համադրման կանոններին, չկրկնելու սկզբունքին, հեռուստատեսային սցենարի կառուցմանը:

Ուսանողները պետք է սովորեն կադրից դուրս խոսքը գրել տեսաշարի հիման վրա, այլ ոչ թե գրել տեքստ, որին պետք է հարմարեցնել տեսաշարը: Դասախոսի խնդիրն է կարևորել հետևյալ ունակությունը. հեռուստադիտողին հասցեագրված տեղեկատվությունը, ասելիքը նախ ամփոփել տեսաշարում, որից հետո միայն կադրերը զուգադրել լրացնող տեքստով: Ծանոթություն տեսաշարի տարբեր բաղադրիչների հետ.

սինքրոններ (ձայնային կտորներ) և լայֆեր (էպիզոդներ), լուսագրեր, երկչափ ու եռաչափ գրաֆիկներ և այլն):

News Factory[1] կամ նմանատիպ համակարգչային ծրագրով գրված սցենարի օրինակով ուսանողները սովորում են հեռուստատեսային սցենարի տարբեր ձևաչափերը, դրանց առանձնահատկությունները: Նյութի առաջատարը, լեզուն և ոճը: Առաջին նախադասություն. ուշադրություն գրավել, չխճճել տեղեկատվության առատությամբ: Առաջատար՝ մեջբերումով. ինչպես անել, որ այն հասկանալի լինի հեռուստադիտողին: Առաջատար՝ անավարտ նախադասությամբ:

Տնային առաջադրանք:

Մինչև 1 րոպե տևողությամբ տեսաշարով լուր: Ուսանողն ընտրում է որևէ իրադարձություն (կարող է օգտվել լրատվական կայքերից), նկարահանում է իրականացնում իրադարձության վայրում, այնուհետև ուշադիր դիտում տեսաշարը, որից հետո միայն դրանց շուրջը «հավաքում», գրում լրագրողական տեքստը՝ կիրառելով այն առաջատարը, որն առավել նպատակահարմար է տվյալ իրադարձության լուսաբանման համար: Դրանից հետո անցնում է մոնտաժի:

Գրականություն

1. **Քոհլեր Դ. Ք.,** Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան, 2001, էջ 167-210:

Դաս 4.

Ամփոփվում է նախորդ դասի հանձնարարությունը: Կազմակերպվում է տեսաշարով լուրի դիտում: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

[1] Այս ծրագրով են աշխատում հայաստանյան գրեթե բոլոր հեռուստաընկերությունների լրատվական ծրագրերի խմբագրություններում:

Դաս 5. Հեռուստատեսային հարցազրույց

Հարցազրույցը՝ որպես մեթոդ. աշխատանքի յուրահատկություններն ու էկրանային դրսևորումները: Հարցազրույց-մեթոդ, որի «արդյունքները» դառնում են նյութի բաղադրիչ՝ իրական ձայնային կտորների (սինքրոնների) տեսքով: Հարցազրույց տաղավարում կամ հերոսի միջավայրում:

Հարցազրույցի նկարահանման առանձնահատկությունները (նկարահանման տեխնիկա, բարձրախոսով աշխատանքի առանձնահատկությունները), օպերատորի հետ աշխատանք. հարցազրույցի մոնտաժ, ներդիր կադրեր (перебивка): Հարցումներ դրսում (vox pop). նկարահանման տեխնիկական ու ստեղծագործական պահանջները: Ինչպես «մոտենալ» մարդկանց:

Գործնական աշխատանք: *Լսարանում նկարահանել հարցազրույց՝ հասկանալու տեխնիկական առանձնահատկությունները և թե որքանո՞վ կարող են դրանք ազդել ստեղծագործական աշխատանքի վրա, ինչպես նաև պատկերացնելու լրագրողի ներգրավվածությունն այդ աշխատանքում (հնարավոր է դասն անցկացնել հրավիրված օպերատորի մասնակցությամբ):*

Տնային առաջադրանք*: Հասարակական վայրերում պատահական անցորդներից վերցնել հարցազրույց (vox-pop) որևէ թեմայի կամ խնդրի վերաբերյալ (թեման ու հարցադրումները մշակել դասի ժամանակ): Ներկայացնել արդյունքները 60-90 վայրկյանանոց նյութի տեսքով:*

Գրականություն

1. Հեռուստատեսություն և ռադիո. լրագրություն և ստեղծագործական մենեջմենթ, Ժողովածու, Երևանի մամուլի ակումբ, Ինտերնյուս, Երևան 2000, էջ 27-39:
2. **Քոհլեր Դ. Ք.,** Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան 2001, էջ 132-145:

Դաս 6. Հեռուստատեսային հարցազրույց

Հանձնարարված «vox-pop»-երի դիտում և քննարկում: Առաջադրանքը գնահատվում է 1 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր)::

Հարցազրույցը՝ որպես ժանր: Հարցազրույցի տարատեսակներն ըստ բովանդակության (տեղեկատվական, պրոբլեմային, դիմանկարային): Հարցազրույցի տարատեսակներն՝ ըստ տեխնիկական առանձնահատկությունների (տաղավարային հարցազրույց, հարցազրույց դրսում, գրասենյակում, ձեռքի և ամրացվող բարձրախոս, մեկ և մի քանի տեսախցիկով): Նախապատրաստական աշխատանք (ճանաչել թեման ու զրուցակցին): Շփման տեխնիկան և փուլերը: Զրուցակցի ընտրության չափանիշները, հարցերի ճշգրիտ ձևակերպումները, ժամանակային սահմանափակումները և դրանց «ճնշման տակ» աշխատելու կարողությունները: Բաց և փակ հարցեր: Հարցերի ռիթմը, անցումները, ճշգրտող հարցերի անհրաժեշտությունը, դադարները: Հարցազրույցի նախաբանը և առաջին հարցը: Հարցազրույցի ավարտը:

Տնային առաջադրանք:

Առանձնացնել օրվա հրատապ մի տեղեկատվություն առցանց պարբերականներից, ընտրել իրազեկ մարդու և փորձել հարցազրույց վերցնել: Որպես այլընտրանք կարող է լինել դիմանկարային հարցազրույց, որը պայմանավորվածություն չեռք բերելու տեսանկյունից ուսանողի համար կարող է ավելի մատչելի լինել: Հարցազրույցի հանձնարարվող տևողությունը՝ 7-8 րոպե: Հարցերի կողմնորոշիչ քանակը՝3-4:

Գրականություն

1. Հեռուստատեսություն և ռադիո. լրագրություն և ստեղծագործական մենեջմենթ, Ժողովածու, Երևանի մամուլի ակումբ, Ինտերնյուս, Երևան 2000, էջ 27-39:
2. **Քոհլեր Դ. Ք.,** Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան 2001, էջ 132-145:

Դաս 7.

Հանձնարարության ամփոփում: Հարցազրույցների դիտում, քննարկում:

Անդրադարձ հարցերի ճիշտ ձևակերպմանը, կադրում հարցազրուցավարի պահվածքին, ժեստերին: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դաս 8. Նորությունների չափորոշիչները

Ի՞նչն է իրադարձությունը դարձնում հեռուստատեսությամբ լուսաբանման արժանի, ի՞նչ սկզբունքներով են առաջնորդվում հեռուստատեսային նորությունների խմբագրությունները լուսաբանման համար իրադարձություններ կամ թեմաներ ընտրելիս՝ նորությունների չափորոշիչները (news values)՝ ըստ Գալտունգի և Ռուժի (կոնֆլիկտայնություն, անսովորություն, մերձավորություն և այլն): Այլ տեսաբանների մոտեցումները: Վարկանիշի ազդեցությունը չափորոշիչների վրա: Ճշգրտություն և օբյեկտիվություն: Աղբյուրների վկայակոչում, մեջբերում, հղում, էթիկական չափորոշիչներ: Ինչպես պահպանել հավասարակշռությունը՝ վարկանիշային արտադրանք տալով և էթիկական չափորոշիչները պահպանելով: Մասնագիտական պատասխանատվություն գործընկերոջ ու լրատվամիջոցի, թիրախային լսարանի և աղբյուրների հանդեպ: Այս հարցերը քննարկել ուսանողների կողմից արդեն պատրաստված նյութերի և/կամ եթեր հեռարձակված որևէ սյուժեի օրինակով:

Տնային առաջադրանք:

Տեղական 3 ամենավարկանիշային հեռուստաընկերությունների նորությունների՝ օրվա գլխավոր թողարկման դիտարկում: Դիտարկման ընթացքում ուսանողը նշումներ է կատարում թողարկման կառուցվածքի, ընտրված նյութերի թեմատիկայի, մատուցման առանձնահատկությունների վերաբերյալ: Համեմատական վերլուծություն կատարելով՝ ուսանողը գրում է 2 էջանոց (A4 ֆորմատ, 12 տառաչափ, 1,5 միջտողային տարածություն) զեկուցում, որում պետք է արտացոլված լինեն գլխավոր մի քանի հարցեր.

1. Ի՞նչ չափորոշիչով է առաջնորդվել թողարկման պատասխանատուն տվյալ իրադարձությանը կամ թեմային անդրադառնալով,

2. Ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվել թողարկման կառուցվածքն ընտրելիս (օրինակ՝ քաղաքականություն, առողջապահություն, հեղո՝ մշակույթ, վերջում՝ սպորտ)

3. Որքանո՞վ է լրագրողը ճշգրիտ և օբյեկտիվ գտնվել իրադարձության կամ թեմայի լուսաբանման հարցում և պահպանել էթիկական չափորոշիչները:

Գրականություն

1. **McGregor Judy**, Restating news values: contemporary criteria for selecting the news values, http://www.anzca.net/documents/2002-conf-papers/382-restating-news-values-contemporary-criteria-for-selecting-the-news-1/file.html

Դաս 9.

Զեկուցումների ընթերցում և քննարկում: Կատարված աշխատանքը գնահատվում է առավելագույնը 2 միավոր:

Միջանկյալ ստուգում 1.

Գնահատել ուսանողի կատարած աշխատանքները՝ հաշվի առնելով վերջիններիս ակտիվ մասնակցությունը դասերին, հանձնարարությունները պատշաճ կատարելու կարողությունը: Այս ամենը նկատի ունենալով՝ ուսանողին տրվում է առավելագույնը 9 միավոր: Գնահատականը ձևավորվում է տնային առաջադրանքների համար նախատեսված միավորների հանրագումարով:

Դաս 10. Իրադարձային ռեպորտաժ

Դիտողականությունը՝ տեղեկատվության հավաքագրման մեթոդ: Ռեպորտաժային մտածողություն: Ռեպորտաժը «ամենահեռուստատեսային» ժանր: Ռեպորտաժի տեսակները՝ ըստ հեռարձակման ձևի (ուղիղ և տեսագրված): Առանձնահատկություններն ու պատրաստման տեխնիկան: Ռեպորտաժ դեպքի վայրից: Ռեպորտաժի պարտադիր և ցանկալի բաղադրիչները (սինքրոն, սթենդ-ափ, լայֆ և այլն):

Գործնական աշխատանք:

Լսարանում կազմակերպվում է արտերկրի կամ տեղական հեռուստաընկերությունների լրագրողների պատրաստած ռեպորտաժի դիտում: Ուսանողներին հանձնարարվում է դիտման ընթացքում նշումներ անել և վերլուծել ռեպորտաժի տարբեր բաղադրիչների (սթենդ-ափ, սինքրոն, լայֆ) կիրառության հաջողված կամ թերի կողմերը:

Տնային առաջադրանք:

Նկարահանել իրադարձային ռեպորտաժ: Տևողությունը՝ 1 րոպե 30 վայրկյանից 2 րոպե: Կարող է լինել ուղիղ եթերի իմիտացիա իրադարձության վայրից:

Գրականություն

1. **Ստեփանյան Լիլիկ,** Հեռուստատեսային ռեպորտաժ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009:

Դաս 11.

Ամփոփվում է նախորդ դասի հանձնարարությունը: Կազմակերպվում է իրադարձային ռեպորտաժի դիտում: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 3 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Քննարկվում է, թե որքանով է հաջողվել ուսանողին միավորել հավաքագրած տեղեկատվությունը, որպեսզի այն հնարավորինս ճշգրիտ արտացոլի իրականությունը: Արդյո՞ք ռեպորտաժներն արտացոլում են այն, ինչ իրականում տեղի է ունեցել, թե՞ մնացել են անավարտ և բո-

վանդակային բացեր ունեն: Տեսանյութերը կարելի է նախ դիտել ձայնն անջատած՝պարզելու համար, թե խոսո՞ւն է արդյոք տեսաշարը կամ հնարավո՞ր է արդյոք առաջին վայրկյաններից գուշակել՝ ինչի մասին է ռեպորտաժը:

Դաս 12. Թեմատիկ ռեպորտաժ

Թեմայի կամ պրոբլեմի ընտրության սկզբունքները, սյուժեների համար գաղափարի փնտրտուք, նախնական աշխատանք, մամուլի հաղորդագրությունների ուսումնասիրություն, նախնական զրույցներ, տեղեկատվության աղբյուրներ (հերոսներ, փորձագետներ. ինչպես ընտրել և տեսանելի դարձնել նրանց միջավայրը): Ովքեր կարող են լինել ռեպորտաժի հերոսներ: Հեղինակը՝ որպես հերոս, վկա, մասնակից: Նյութը սկսել անհատից, երևույթը, խնդիրը «բացել» անհատի միջոցով: Թեմատիկ ռեպորտաժի իրականացման տեխնիկական, բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները: Վերլուծական թողարկումներում ներառվող թեմատիկ ռեպորտաժներ: Լրագրողի աշխատանքի առանձնահատկությունները թեմատիկ ռեպորտաժ պատրաստելիս (հակադիր տեսակետներ ներկայացնող կողմերի ներգրավում, նկարահանման համաձայնություն, ռեպորտաժի համար անհրաժեշտ տեսաշարի նկարահանում, գաղտնի նկարահանումից բխող իրավական և էթիկական խնդիրներ, պահոցի հետ աշխատանք, սթենդ-ափների պլանավորում, անիմացիաների կամ գրաֆիկական այլ լուծումների կիրառում, երաժշտական ձևավորում):

Տնային առաջադրանք:

Նկարահանել թեմատիկ ռեպորտաժ: Տևողությունը՝ 3-4 րոպե: Պարտադիր բաղադրիչների՝ սինքրոնների, սթենդ-ափների, լայֆերի առկայություն, հաղորդավարական բացում:

Գրականություն

1. **Ստեփանյան Լիլիկ,** Հեռուստատեսային ռեպորտաժ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009:

Դաս 13.

Ամփոփվում է նախորդ դասի հանձնարարությունը: Կազմակերպվում է թեմատիկ ռեպորտաժի դիտում: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 4 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր): Հատուկ քննարկման թեմա են դառնում նյութի կառուցվածքն ու դրամատուրգիան, սինքրոնների և նյութի մյուս բաղադրիչների, կադրից դուրս խոսքի ու կադրերի համադրությունը, կրկնություններից խուսափելու ունակությունը: Դասախոսը փորձում է ներգրավել ուսանողներին. նրանք պիտի կարողանան ոչ միայն տեսնել բացթողումները, այլև իրենք առաջարկեն շտկման տարբերակներ:

Դաս 14. Հատուկ ռեպորտաժ

Հատուկ ռեպորտաժը՝ որպես սահմանային ժանր: Տեղություն, կառուցվածք, լրագրողի աշխատանքի առանձնահատկություններ, ակնարկի ժանրին բնորոշ բաղադրիչների և արտահայտչամիջոցների կիրառություն, փաստավավերագրական ֆիլմի հետ ընդհանրություններ, դրամատուրգիա, մոնտաժի առանձնահատկությունները:

Գրականություն

1. **Ստեփանյան Լիլիկ,** Հեռուստատեսային ռեպորտաժ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009:

Դաս 15. Ինֆոզվարճանք

Տեղական և համաշխարհային մեդիայում գերիշխող ձեռագրերը: Ինֆոզվարճանքը (infotainment) լրատվական թողարկումներում և այլ ձևաչափերում: Ինչպե՞ս խաղարկել նորությունը՝ տեղեկատվությունը համեմելով զվարճանքի տարրերով: Ի՞նչ է նշանակում զվարճանք և ինչպես այն «ստանալ»: Իրավիճակային և խաղարկային սթենդ-ափներ,

դրանց կիրառման հնարավորությունները: Ինֆոզվարճանքի կիրառությամբ պատրաստված նորությունների թողարկման դիտում և վերլուծություն:

Տնային առաջադրանք:

Տեղական հեռուստաեթերի 3-օրյա դիտարկմամբ արձանագրել ինֆոզվարճանքի կիրառման օրինակներ, վերլուծել դրանց բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները: Աշխատանքը ներկայացնել 2 էջանոց (A4 ֆորմատ, 12 տառաչափ, 1,5 միջտողային տարածություն) զեկույցի տեսքով:

Գրականություն

1. **Morell Nicole,** Are Television News Programs Becoming Nothing More Than Infotainment, 2007, Univeruity of Road Island. http://digitalcommons.uri.edu/cgi/viewcontent.cgi?article=1053&context=srhonorsprog
2. **Зорков Николай,** Инфотейнмент на российском телевидении, 2005. http://www.relga.ru/Environ/WebObjects/tgu-www.woa/wa/Main?textid=735&level1=main&level2=articles

Դաս 16.

Զեկուցումների ընթերցում և քննարկում: Կատարված աշխատանքը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Միջանկյալ ստուգում 2.

Գնահատել ուսանողի կատարած աշխատանքները՝ հաշվի առնելով վերջիններիս ակտիվ մասնակցությունը դասերին, հանձնարարությունները պատշաճ մակարդակով կատարելու կարողությունը՝ ողջունելով ավելին անելու ցանկությունը: Այս ամենը նկատի ունենալով՝ ուսանողին տրվում է առավելագույնը 9 միավոր: Այն կամփոփվի տնային առաջադրանքների համար նախատեսված միավորների հանրագումարով:

Ստուգարք

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

Դաս 1. Նորությունների թողարկում

Ամփոփվում են նախորդ կիսամյակի թեմաներն ու առաջադրանքները: Ուսանողները փորձում են վերհիշել իրենց կատարած աշխատանքի ամենաբարդ փուլերը և ներկայացնել, թե որ պահանջները կամ հմտություններն են ամենից շատ տպավորվել:

Ծանոթություն լրատվական խմբագրության աշխատանքի յուրահատկություններին: Հեռուստատեսային մասնագիտություններ: Լրատվական թողարկման նախապատրաստման աշխատանքներ, եթերային ինքնագովազդ (անոնս), հաղորդավար-մեկնաբանի աշխատանք, սյուժեների բացման տեքստեր, բաղադրիչներ, թողարկման կառուցվածք, թեմատիկա: Տաղավարային աշխատանք, աշխատանք հեռուստահուշարարով, բնական պահվածք կադրում: Խոսքի բնական արագություն, «մարդկային» խոսելաոճ:

Տնային առաջադրանք:

Ուսանողը պարբերաբար է առանց տեսաշարի լուր մինչև 45 վայրկյան տևողությամբ՝ պահպանելով հակիրճության, պարզության, հեռուստատեսային ոճին առավելագույն չափով համապատասխանության սկզբունքները: Գրավոր տեքստը պետք է ենթարկվի մանրակրկիտ մշակման կարդալու և շտկումների միջոցով: Հաջորդ դասին ուսանողը պարտավոր է ներկայանալ տեքստը լավ յուրացրած, տրամաբանական շեշտերը և առոգանությունը հղկած:

Գրականություն

1. **Քոհլեր Դ. Ք.,** Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան, 2001, էջեր 154-166, 256-262:

Դաս 2. Հաղորդավար-մեկնաբանի աշխատանքը տաղավարում

Նախապատրաստած տեքստը ուսանողները լսարան-հեռուստատաղավարում մատուցում են որպես հաղորդավար-մեկնաբան: Լուրը տեսագրվում է (հնարավորության դեպքում կիրառվում է հեռուստահուշարար, հակառակ դեպքում ուսանողը պետք է գրեթե անգիր իմանա տեքստը, որպեսզի այն մատուցի՝ թղթին շատ հպանցիկ հայացք գցելով): Դասախոսը ընթացքում կարող է շտկումներ անել մատուցվող նյութի բովանդակության, բանավոր խոսքի առոգանության կամ տեմպի վերաբերյալ, մինչև այն հղկվի առավելագույն չափով:

Դաս 3.

Տաղավարային տեսագրությունների դիտում: Կատարված աշխատանքի համար տրվում է 1 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դաս 4. Ակնարկ (դիմանկարային, ճանապարհորդական)

Դիմանկարային ակնարկ: Հերոսներ՝ էկրանային և իրական կերպար: Նախապատրաստական աշխատանք: Ինչպես ճանաչել հերոսին և զրուցել նրա հետ, ինչպես տեսանելի դարձնել նրա միջավայրը: Մասնիկներ, մանրամասներ: Ովքեր կարող են օգնել բացահայտելու գլխավոր հերոսին: Հնարավոր խոչընդոտները հերոսի ու նյութի մյուս «մասնակիցների» հետ տարվող աշխատանքներում. էթիկական հարցեր: Նկարահանման տեխնիկա, դինամիկա, շարժում և ռիթմ: Մոնտաժի հնարավորությունները:

Դիմանկար-ակնարկ հեղինակի մասնակցությամբ և դիմանկար-մենախոսություն. աշխատանքի յուրահատկությունները գաղափարից մինչև մոնտաժ: Կադրերի բաղադրությունը: Կերպարի ստեղծման կամ տեղեկատվության անձնավորման կիրառությունը այլ ժանրի սյուժեներում:

Ճանապարհորդական ակնարկ: Ինչպես կերտել որևէ երկրի կամ քաղաքի «կերպարը»:

Գործնական աշխատանք:

Դասի շրջանակներում կազմակերպել որևէ հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակված ակնարկի հաջողված օրինակի դիտում:

Տնային առաջադրանք:

Նկարահանել ակնարկի որևէ տարատեսակ (դիմանկարային, ճամփորդական): Հաշվի առնելով այս ժանրում օպերատորական աշխատանքի բարդությունը՝ որպես այլընտրանք ուսանողին տրվում է հնարավորություն ակնարկի փոխարեն նկարահանելու ռեպորտաժ, որում օգտագործված կլինեն տեղեկատվության անձնավորման մեթոդը, առանձին հերոսների, կերպարների միջոցով ընդհանրացումների գնալու հնարքը: Ուսանողը հատուկ ուշադրություն պետք է դարձնի իր այուժեի հաղորդավարական բացմանը և հետևողականորեն աշխատի դրա վրա:

Դաս 5.

Հանձնարարության ստուգում: Խրախուսելի է տեսանյութերի ակտիվ դիտումը, որին զուգահեռ կքննարկվեն նաև մոնտաժային լուծումները. իմաստային ինչպիսի լիցք է հաղորդել տեղեկատվությանը մոնտաժը: Ուսանողներին հնարավորություն է տրվում մինչև հաջորդ դասը կրկին աշխատել նյութի վրա, կատարել անհրաժեշտ շտկումները՝ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական:

Դաս 6.

Հանձնարարության գնահատում: Կատարված աշխատանքի համար տրվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դաս 7.

Զրույց՝ լրատվական, վերլուծական, ժամանցային:

Զրուցավարը՝ որպես ակտիվ մասնակից և մոդերատոր: Զրույցի փուլերը: Սկիզբ և ավարտ: Զրուցավարի որակներն ու հարցադրումների ռիթմը: Զրույցի նկարահանում տաղավարում և տաղավարից դուրս: Հարցազրույց և զրույց. առանձնահատկությունները: Զրույց կլոր սեղանի շուրջ: Երկխոսական բնույթի հաղորդաշարեր. նոր ձևաչափեր: Բանավեճ: Մոդերատորի աշխատանքը բանավեճ վարելիս:

Գործնական աշխատանք:

Դիտել զրույցի ժանրով որևէ ճանաչված հաղորդաշարի թողարկում և քննարկել:

Տնային առաջադրանք:

Ուսանողը պետք է ընտրի երկխոսական բնույթի որևէ հաղորդում (զրույց, բանավեճ) և վերլուծի մոդերատորի աշխատանքը. ճիշտ պահվածք, զրուցակիցներին ճիշտ պահին և գրագետ ընդմիջելու ունակություն, բանավեճի դեպքում՝ հաղորդման թելը չեռքից բաց չթողնելու հմտություն: Աշխատանքը ամփոփվում է 2 էջանոց (A4 ֆորմատ, 12 տառաչափ, 1,5 միջտողային տարածություն) զեկուցման մեջ:

Դաս 8.

Զեկուցումների ընթերցում և քննարկում: Կատարված աշխատանքը գնահատվում է առավելագույնը 1 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Միջանկյալ ստուգում 1.

Գնահատել ուսանողի կատարած աշխատանքները՝ հաշվի առնելով վերջիններիս ակտիվ մասնակցությունը դասերին, հանձնարարությունները պատշաճ մակարդակով կատարելու կարողությունը՝ ողջունելով ավելին անելու ցանկությունը: Այս ամենը նկատի ունենալով՝ ուսանողին տրվում է առավելագույնը 4 միավոր: Այն կամփոփվի տնային առաջադրանքների համար նախատեսված միավորների հանրագումարով:

Երկրորդ կիսամյակի երկրորդ հատվածը պետք է ամբողջությամբ նվիրել ուսանողների կողմից չեռք բերված հմտությունները հղկելուն: Պրակտիկան ցույց է տալիս, որ մասնագիտական որակները արմատանում են միայն այն դեպքում, երբ հեռուստալրագրողը շարունակաբար աշխատում է տարբեր ժանրերի տեսանյութերի վրա: Էկրանային արտահայտչամիջոցների և լրագրողական գործիքների կիրառությունը պետք է ուսանողի մոտ դառնա ինքնաշխատ մի համակարգ, ինչպես ենթագիտակցական մակարդակում մենք կիրառում ենք հայերենի այբուբենը առանց ջանքեր գործադրելու:

Դաս 9.

Այս դասին ուսանողների հետ պետք է աշխատել հեռուստատեսային նյութերի լեզուն առավելագույն չափով մշակելու և յուրացնելու ուղղությամբ: «Ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ արեց» հարցերի պատասխանները հեռուստատեսային ոճում:

Գործնական աշխատանք: *Լրատվական գործակալության հաղորդագրությունը կամ լրատվական կայքից վերցված նյութը վերափոխել՝ դարձնելով 35-40 վայրկյան տևողությամբ: Ուսանողը հատուկ ուշադրություն պետք է դարձնի լեզվի հակիրճությանն ու նախադասությունների պարզությանը, անվանումների, թվերի, հապավումների տեղին օգտագործմանն ու ճիշտ արտասանությանը, առաջատարին, այժմրոպեականությունն արտահայտող բառերին, բայի ժամանակաձևերին: Աշխատանքները քննարկվում են լսարանում:*

Տնային առաջադրանք:

Ուսանողին նմանատիպ առաջադրանք է տրվում տանը իրականացնելու համար: Յուրաքանչյուր ուսանող հաջորդ դասին պետք է ներկայացնի այդպիսի 2 աշխատանք:

Գրականություն

1. **Քոհլեր Դ. Ք.,** Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան 2001, էջ 42-65:

Դաս 10.

Հանձնարարության գնահատում: Կատարված աշխատանքի համար տրվում է 1 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Տնային առաջադրանք:

Նկարահանել իրադարձային ռեպորտաժ՝օգտագործելով կառուցվածքային տարբեր բաղադրիչներ (սթենդ-ափի պարտադիր առկայությամբ): Հաջորդ դասին ուսանողը ներկայանում է ռեպորտաժի սցենարով (դեռ չմոնտաժված վիճակում):

Դաս 11.

Ռեպորտաժների սցենարների խմբագրում: Դասախոսը յուրաքանչյուր ուսանողի հետ կատարում է այն աշխատանքը, որը անխուսափելի արտադրական փուլ է համարվում ցանկացած հեռուստաընկերության լրատվական ծրագրի խմբագրությունում: Սցենարները մանրամասն քննարկվում են, դասախոսը, սակայն, ոչ թե շտկումներ է անում, այլ մատնանշում թերությունները՝ շտկումները թողնելով ուսանողին: Այս մեթոդն ուսանողի մոտ զարգացնում է սեփական սխալները նկատելու ունակություն և նպաստում լրագրողի մասնագիտական ձեռագրի ձևավորմանը:

Տնային առաջադրանք:

Սցենարի վերախմբագրում և ռեպորտաժի մոնտաժ: Հաջորդ դասին ուսանողը ներկայանում է պատրաստի տեսանյութով:

Դաս 12.

Ռեպորտաժների դիտում և գնահատում: Կատարված աշխատանքի համար տրվում է 1 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Տնային առաջադրանք:

Նկարահանել թեմատիկ ռեպորտաժ: Հաջորդ դասին ուսանողը ներկայանում է ռեպորտաժի սցենարով (դեռ չմոնտաժված վիճակում):

Դաս 13.

Ռեպորտաժների սցենարների խմբագրում: Սցենարները մանրամասն քննարկվում են, դասախոսը, սակայն, ոչ թե շտկումներ է անում, այլ մատնանշում թերությունները՝շտկումները թողնելով ուսանողին:

Տնային առաջադրանք:

Սցենարի վերախմբագրում և ռեպորտաժի մոնտաժ: Հաջորդ դասին ուսանողը ներկայանում է պատրաստի տեսանյութով:

Դաս 14.

Ռեպորտաժների դիտում և գնահատում: Կատարված աշխատանքի համար տրվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դաս 15.

Շարունակվում է ռեպորտաժների դիտումը և գնահատումը: Կատարված աշխատանքի համար տրվում է առավելագույնը 2 միավոր (գնահատման քայլը՝ 0,5 միավոր):

Դաս 16. Միջանկյալ ստուգում 2.

Գնահատել ուսանողի կատարած աշխատանքները՝ հաշվի առնելով վերջիններիս ակտիվ մասնակցությունը դասերին, հանձնարարությունները պատշաճ մակարդակով կատարելու կարողությունը՝ ողջունելով ավելին անելու ցանկությունը: Այս ամենը նկատի ունենալով՝ ուսանողին տրվում է առավելագույնը 4 միավոր: Այն ամփոփվում է տնային առաջադրանքների համար նախատեսված միավորների հանրագումարով:

Ամփոփիչ քննություն: *Ամփոփիչ քննության համար հանձնարարվում է թեմատիկ (պրոբլեմային) ռեֆերատ: Աշխատանքը գնահատվում է 10 միավոր: Այդ միավորները բաշխվում են ըստ ներքոհիշյալ բաղադրիչների.*

1. *Ընտրված թեմայի հեռուստատեսային լինելը (որքանով է համապատասխանում նորությունների չափորոշիչներին, որքանով է կարևոր կամ հետաքրքիր պոտենցյալ հեռուստադիտողի համար, որքանով է հարմար էկրանայնացման համար) - 2 միավոր,*
2. *Ռեֆերատի համակողմանիություն, հավասարակշռություն և անաչառություն (պրոբլեմի շուրջ հակառակ դիրքորոշում ունեցող կողմերի ներգրավում, անպատասխան մնացող հարցերի բացառում) – 2 միավոր,*
3. *Ռեֆերատի կառուցվածք (չեզոքություն, հետաքրքիր շրջադարձեր, բաղադրիչների համամասնություն, կրկնությունների բացառում) և բաղադրիչների տեղին կիրառում (սթենդ-ապ, լայֆ, սինքրոն, կադրից դուրս խոսք և այլն) - 2 միավոր,*
4. *Տեսաշար և կադրային մոնտաժ (ճիշտ ընտրված կադրեր, համապատասխան ռակուրսներ և պլաններ, ասելիք ունեցող տեսաշար, օպերատորական և մոնտաժային գրագետ աշխատանք) – 2 միավոր,*
5. *Ձայնաշար և ձայնային մոնտաժ (կադրից դուրս տեքստի բովանդակություն, գրագետ շարադրանք, հեռուստատեսային ոճ, ընթերցման բնական արագություն և ճիշտ առոգանություն) – 2 միավոր:*

ՄԱՄՈՒԼ

ՕՐԱԹԵՐԹԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝ Տիգրան Ֆարմանյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց պող., 2ա շենք, 13-րդ և 14-րդ հարկեր
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 57 56, 54 86 11
Էլ. փոստ՝ hh@hhpress.am
Կայք՝ www.hhpress.am

«ԱՌԱՎՈՏ»
Գլխավոր խմբագիր՝ Արամ Աբրահամյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց պող., 2ա շենք, 15-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 88 68, 52 97 52, 52 87 52
Էլ. փոստ՝ news@aravot.am
Կայք՝ www.aravot.am

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»
Գլխավոր խմբագիր՝ Թագուհի Թովմասյան
Հասցե՝ Երևան, Աբովյան 22ա/3
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 64 23
Էլ. փոստ՝ info@armlur.am, info@zhoghovurd.am
Կայք՝ www.zhoghovurd.am

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»
Գլխավոր խմբագիր՝ Աննա Հակոբյան,
Հասցե՝ Երևան, Իսրայելյան 37
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 11 75, 54 43 39
Էլ. փոստ՝ info@armtimes.com
Կայք՝ www. armtimes.com

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»
Գլխավոր խմբագիր՝ Գագիկ Մկրտչյան

Հասցե՝ Երևան, Թումանյան 38
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 32 11, 53 88 65
Էլ. փոստ՝ hayashkh@arminco.com
Կայք՝ www.armworld.am

«ՀՐԱՊԱՐԱԿ»
Գլխավոր խմբագիր՝ Արմինե Օհանյան
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 66 70
Էլ. փոստ՝ info@hraparak.am
Կայք՝ www.hraparak.am

«ՉՈՐԲՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝ Գոհար Վեզիրյան
Հասցե՝ Երևան, Նալբանդյան 50
Հեռ.՝ (374 10) 52 02 12
Էլ. փոստ՝ chiog@arminco.com
Կայք՝ www.chi.am

ԵՌՕՐՅԱ ԹԵՐԹԵՐ

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»
Գլխավոր խմբագիր՝ Ֆլորա Նախշքարյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց պող., 2ա շենք, 7-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 77 23, 52 92 45
Էլ. փոստ՝ gonline@arminco.com, info@golosarmenii.am
Կայք՝ www.golosarmenii.am

«ԻՐԱՎՈՒՆՔ»
Գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Գալաջյան
Հասցե՝ Երևան, Կողբացու 50ա, 2-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 27 30, 53 90 11

Էլ. փոստ՝ iskakan@mail.ru, iravunk@narod.ru
Կայք՝ www.iravunk.com

«168 ԺԱՄ»
Գլխավոր խմբագիր՝ Սաթիկ Սեյրանյան
Հասցե՝ Երևան, Պուշկին 3Ա, 2-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 48 31, 52 29 58
Էլ. փոստ՝ 168@168.am
Կայք՝ www.168.am

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ»
Գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Սաթյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց պող., 2ա շենք, 3-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 55 80, 52 69 46
Էլ. փոստ՝ nvremya@arminco.com
Կայք՝ www.nv.am

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԵՐ

«ԱԶԳ»
Գլխավոր խմբագիր՝ Հակոբ Ավետիքյան
Հասցե՝ Երևան, Հանրապետության 47
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 29 60
Էլ. փոստ՝ azg2@arminco.com
Կայք՝ www.azg.am

«ԱՎԱՆԳԱՐԴ»
Գլխավոր խմբագիր՝ Ջուլիետա Մարտիրոսյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 2ա, 4-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 89 18, (374 60) 65 48 25
Էլ. փոստ՝ avangard-1@rambler.ru

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»
Գլխավոր խմբագիր՝ Կարինե Խոդիկյան
Հասցե՝ Երևան, Բաղրամյան 3
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 05 94, 56 13 01
Էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru
Կայք՝ www.grakantert.am

«ԵԹԵՐ»
Գլխավոր խմբագիր՝ Գոռ Ղազարյան
Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 5
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 55 34 13, 57 59 60
Էլ. փոստ՝ editor@eter.am
Կայք՝ www.eter.am

«02»
Գլխավոր խմբագիր՝ Ներսես Աթաբեկյան
Հասցե՝ Երևան, Նալբանդյան 130
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 00 05
Էլ. փոստ՝ news02@intarnet.am

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝ Գագիկ Մինասյան
Հասցե՝ Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 57 49 56
Էլ. փոստ՝ krtutyuna@yandex.ru

«ՀԱՅ ՁԻՆՎՈՐ»
Գլխավոր խմբագիր՝ Էդուարդ Ոսկանյան
Հասցե՝ Երևան, Մոսկովյան 5
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 83 49

ԱՄՍԱԳՐԵՐ

«ԱՆԴԻՆ»
Գլխավոր խմբագիր՝ Մերուժան Տեր-Գուլանյան
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/13, 6-րդ հարկ
Հեռ.՝ (374 60) 64 31 39
Էլ. փոստ՝ andinhandes@gmail.com
Կայք՝ www.andin.am

«ԴԵ-ՖԱԿՏՈ»
Տնօրեն՝ Մենոա Հարությունյան
Հասցե՝ Երևան, Ամիրյան 3
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 43 64, (374 55) 56 43 64
Կայք՝ www.df.am

NEWMAG
Գլխավոր խմբագիր՝ Գնել Նալբանդյան
Հասցե՝ Երևան, Եղվարդի խճուղի, շենք 1
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 61 88, (374 96) 56 61 88
Էլ. փսստ՝ info@newmag.am
Կայք՝ www.newmag.am

ԱՌՑԱՆՑ ՄԱՄՈՒԼ

NEWS.AM
Խմբագիրներ՝ Անդրանիկ Իսպիրյան, Արթուր Խեմչյան, Անահիտ Սարգսյան
Համակարգող՝ Արտակ Եղիազարյան
Հասցե՝ Երևան, Վերին Շինգավիթ 2
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 22 66 21
Էլ. փոստ՝ editor@news.am
Կայք՝ www.news.am

ARMENIANOW
Գլխավոր խմբագիր՝ Ջոն Հյուզ
Հասցե՝ Երևան, Ղազար Փարպեցու 26/9
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 24 22
Էլ. փոստ՝ info@armenianow.com
Կայք՝ www.armenianow.com

HETQ.AM
Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Բաղդասարյան
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 33 63, 58 11 02
Էլ. փոստ՝ hetq@hetq.am, info@hetq.am
Կայք՝ www.hetq.am

LRAGIR.AM
Տնօրեն՝ Հայկազն Ղահրիյան
Հասցե՝ Երևան, Չարենցի 1
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 57 46 37
Էլ. փոստ՝ info@lragir.am
Կայք՝ www.lragir.am

PANORAMA.AM
Տնօրեն՝ Անահիտ Ոսկանյան
Հասցե՝ Երևան, Արամի 88
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 72 75, 54 72 74
Էլ. փոստ՝ info@panorama.am
Կայք՝ www.panorama.am

TERT.AM
Խմբագիր՝ Սասուն Խաչատրյան
Հասցե՝ Երևան, Եղվարդի խճուղի, 1 շենք
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 17 75, (374 60) 52 85 28

Էլ. փոստ՝ editor@tert.am
Կայք՝ http://www.tert.am

YERKIR.AM
Խմբագիր՝ Ագնեսա Խամոյան
Հասցե՝ Երևան, Հանրապետության 30
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 15 01, 52 78 62
Էլ. փոստ՝ news@yerkir.am
Կայք՝ http://www.yerkir.am

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐՄԵՆՊՐԵՍ»
Տնօրեն՝ Արամ Անանյան
Հասցե՝ Երևան, Սարյան 22
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 98 18
Էլ. փոստ՝ contact@armenpress.am, apnews@armenpress.am
Կայք՝ www.armenpress.am

«ԱՐՄԻՆՖՈ»
Տնօրեն՝ Էմանոիլ Սկրտչյան
Հասցե՝ Երևան, Իսահակյան 28, 2-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 31 72, 54 31 73, 54 31 74
Էլ. փոստ՝ news@arminfo.am
Կայք՝ www.arminfo.info

«ՄԵԴԻԱՄԱՔՍ»
Տնօրեն՝ Արա Թաղևոսյան
Հասցե՝ Երևան, Աբովյան 8, 2-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 54 31, 54 54 37
Էլ. փոստ՝ news@mediamax.am
Կայք՝ www.mediamax.am

«ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ»
Տնօրեն՝ Տիգրան Հարությունյան, Գայանե Առաքելյան
Հասցե՝ Երևան, Իսահակյան 28
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 59 65, 56 19 05, 52 57 62, 52 42 79
Էլ. փոստ՝ nt1@noyan-tapan.am, nt2@noyan-tapan.am, contact@noyan-tapan.am
Կայք՝ www.nt.am

PANARMENIAN.NET
Տնօրեն՝ Արմեն Ազարյան
Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 5
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 55 14 98, 55 17 49
Էլ. փոստ՝ media@pan.am
Կայք՝ www.panarmenian.net

«ՖՈՏՈԼՈՒՐ»
Տնօրեն՝ Մելիք Բաղդասարյան
Հասցե՝ Երևան, Պուշկինի 3ա շենք
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 28 41
Էլ. փոստ՝ photolur@arminco.com
Կայք՝ www.photolure.am

ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ

«Անալիտիկ»
Հասցե՝ Երևան, Փ. Բուզանդ 1/3, հարկ 6
Հեռ.՝ (374 11) 33 36 06, (374 98) 91 79 18
Էլ. փոստ՝ info@analitik.am
Կայք՝ www.analitik.am

«Ելակետ»
Հասցե՝ Երևան, Խանջյան 13ա, 504 սենյակ
Հեռ.՝ (374 60) 50 11 74
Էլ. փոստ՝ yelaketmamuliakumb@gmail.com

«Հենարան»
Հասցե՝ Երևան, Խանջյան 13
Հեռ.՝ (374 10) 54 23 13
Էլ. փոստ՝ henaran.am@gmail.com
Կայք՝ www.henaran.am

«Տեսակետ»
Հասցե՝ Երևան, Խանջյան 11, 2-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 52 25 50, (374 77) 40 09 55
Էլ. փոստ՝ tesaket-club@yandex.ru
Կայք՝ www.tesaket.info

«Պոստ Սկրիպտում»
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 2, 312 սենյակ
Հեռ.՝ (374 93) 09 66 08, (374 77) 31 11 56, (374 55) 56 00 22
Էլ. փոստ՝ postscriptumpressclub@gmail.com

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
Նախագահ՝ Բորիս Նավասարդյան
Հասցե՝ Երևան, Ղազար Փարպեցի 9բ.
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 00 67, 53 35 41, 53 76 62, 53 56 61
Էլ. փոստ՝ pressclub@ypc.am
Կայք՝ www.ypc.am

ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
Նախագահ՝ Լևոն Բարսեղյան
Հասցե՝ Շիրակի մարզ, Գյումրի
Հեռ./Ֆաքս՝ (374 312) 5 06 22
Էլ. փոստ՝ admin@asparez.am
Կայք՝ www.asparez.am

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Նախագահ՝ Լիանա Դոյդոյան
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 09 22
Էլ. փոստ՝ foi@foi.am
Կայք՝ www.foi.am

ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ
Նախագահ՝ Սուրեն Դեհերյան
Հասցե՝ Երևան, Ազատության պող. 24, 3-րդ հարկ, 310 սենյակ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 50 09 77, 20 45 67
Էլ. փոստ՝ info@jnews.am
Կայք՝ www.jnews.am

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Նախագահ՝ Աշոտ Մելիքյան
Հասցե՝ Երևան, Մաշտոցի պողոտա 13
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 38 95
Էլ. փոստ՝ ashot.cpfe@gmail.com
Կայք՝ www.khosq.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Նախագահ՝ Աստղիկ Գևորգյան
Հասցե՝ Երևան, Պուշկինի 3ա
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 12 76
Էլ. փոստ՝ domjour@nt.am

ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ
Նախագահ՝ Էդիկ Բաղդասարյան
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 31 49, 56 33 63
Էլ. փոստ՝ info@hetq.am
Կայք՝ www.hetq.am

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Նախագահ՝ Նունե Սարգսյան
Հասցե՝ Երևան, Արշակունյաց պողոտա 3, 3-րդ հարկ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 36 20, 52 55 27
Էլ. փոստ՝ office@internews.am
Կայք՝ www.mediainitiatives.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԻ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐՆ ՈՒ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՀՀ Նախագահի

Մամուլի քարտուղար

Հեռ.՝ (374 10) 58 87 24

Էլ. փոստ՝ spokesman@president.am

Աշխատակազմի հասարակայնության և տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչություն

Հեռ.՝ (374 10) 52 53 92

Էլ. փոստ՝ meri@president.am, press@president.am

ՀՀ կառավարություն

ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար

Հեռ.՝ (374 10) 51 59 57

Էլ. փոստ՝ gohar.poghosyan@gov.am

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Հեռ.՝ (374 10) 51 58 40

Էլ. փոստ՝ susanna.tonoyan@gov.am

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հասարակայնության հետ կապերի բաժին

Հեռ.՝ (374 10) 52 14 31

Էլ. փոստ՝anush.danielyan@mlsa.am

ՀՀ առողջապահության նախարարություն

Նախարարի մամուլի քարտուղար

Հեռ.՝ (374 10) 56 56 08

Էլ. փոստ՝ ahaytayan@moh.am

Հասարակայնության հետ կապերի բաժին

Հեռ.՝ (374 10) 56 56 08

Էլ. փոստ՝ lbabakh@moh.am

ՀՀ արդարադատության նախարարություն
Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 10) 31 91 18
Էլ. փոստ՝ press@moj.am

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 60) 62 02 14
Էլ. փոստ՝ spokesman@mfa.am
Մամուլի, տեղեկատվության և հասարակայության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 60) 62 02 01
Էլ. փոստ՝ press@mfa.am

ՀՀ բնապահպանության նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 11) 81 85 57
Էլ. փոստ՝ tehmina.arzumanyan@mnp.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 11) 81 85 59
Էլ. փոստ՝ press@mnp.am, armen.vardanyan@mnp.am

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 11) 54 25 03
Էլ. փոստ՝ ani.smbatyan@minagro.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 11) 52 15 24
Էլ. փոստ՝ press@minagro.am

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 11) 59 72 10
Էլ. փոստ՝ akhechoyan@mineconomy.am, press@mineconomy.am

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 11) 52 88 48
Էլ. փոստ՝ press@minenergy.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 11) 52 88 48
Էլ. փոստ՝ information@minenergy.am

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 10) 54 67 13
Էլ. փոստ՝ zyeganyan@edu.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 10) 54 67 13
Էլ. փոստ՝ a_baghdasaryan@edu.am, info@edu.am

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ./Ֆաքս.՝ (+374 11) 56 45 46
Էլ. փոստ՝ press@mincult.am, pressmincult@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարություն
Նախախարի մամուլի քարտուղար
Հասցե՝ Երևան, Բագրևանդի 5
Հեռ.՝ (374 10) 55 52 40
Էլ. փոստ՝ modpress@mail.am
Կայք՝ www.mil.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հասցե՝ Երևան, Բագրևանդի 5
Հեռ.՝ (374 10) 55 52 40
Էլ. փոստ՝ modpress@mail.am
Կայք՝ www.mil.am

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հասցե՝ Երևան, Աբովյան 9
Հեռ.՝ (374 10) 52 99 28
Էլ. փոստ՝ msy@msy.am
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 10) 54 69 33,
Էլ. փոստ՝ anush@msy.am

ՀՀ սփյուռքի նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 10) 58 56 01
Էլ. հասցե՝sgeghamyan@mindiaspora.am
Մամուլի և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 10) 58 56 01
Էլ. փոստ՝ press@mindiaspora.am

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 60) 44 02 30, (374 10) 31 77 20
Էլ. փոստ՝ faina.vardanyan@mtaes.am

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 10) 59 01 71
Էլ. փոստ՝angela.martirosyan@mtc.am, press@mtc.am
Հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 10) 59 01 40
Էլ. փոստ՝mtcpress@mtc.am

Հ Հ քաղաքաշինության նախարարություն
Նախարարի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 11) 62 17 12
Էլ. փոստ՝ a.yesayan@minurban.am

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 11) 62 17 11

ՀՀ ֆինանսների նախարարություն
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ.՝ (374 60)70 03 55
Էլ. փոստ՝ sofi.simonyan@minfin.am

ՀՀ սահմանադրական դատարան
Մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 11) 58 81 25
Էլ. փոստ՝ papikyan1944@mail.ru

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
Մամուլի քարտուղար
Հեռ.՝ (374 10) 56 32 71
Էլ. փոստ՝ HermineH@elections.am

Երևանի քաղաքապետարան
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ (374 10) 51 42 40 Ընդունարան
Էլ. փոստ՝ press@yerevan.am
Կայք՝ www.yerevan.am

ՀՀ ոստիկանություն
Հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության պետ
Հեռ.՝ (374 10) 54 69 14
Էլ. փոստ՝ press@police.am
Մարդու իրավունքների պաշտպան
Հեռ.՝ (374 10) 53 88 31
Էլ. փոստ՝ sh_danielyan@ombuds.am

ՀՀ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հանրային հեռուստաընկերությունն ունի նաև արբանյակային հեռարձակում:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 65 25 71, 65 59 72, 65 37 51
Էլ. փոստ՝ director@armtv.com: hailur@armtv.com
Կայք՝ www.1tv.am

«Հ2» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հ2» հեռուստաընկերությունն ունի նաև արբանյակային հեռարձակում:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 39 88 31
Կայք՝ www.tv.am

«ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԱՆԹ» հեռուստաընկերությունն ունի նաև արբանյակային հեռարձակում:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 27 76 68, 27 76 89, 27 76 90
Էլ. փոստ՝ shanttv@arminko.com
Կայք՝ www.shanttv.com

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ_ՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆԻԱ» հեռուստաընկերությունն ունի նաև արբանյակային հեռարձակում:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 36 93 44, 36 68 52
Էլ. փոստ՝ news@armeniatv.am, mail@ameniatv.am
Կայք՝ www.atmeniatv.am

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» հեռուստաընկերությունն ունի նաև արբանյակային հեռարձակում:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 57 65 12, 57 65 40, 57 65 81
Էլ. փոստ՝ yerkirtv@arminko.com
Կայք՝ www.yerkirmedia.am

«ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 42 08 11, 42 08 11, 46 16 47
Էլ. փոստ՝ info@shoghakat.am
Կայք՝ www.shoghakat.am

«ԿԵՆՏՐՈՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 39 64 64, 39 85 87
Էլ. փոստ՝ epikentron@stalker-tc.am
Կայք՝ www.kentron.tv

«ԱՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 44 33 93, 44 03 00
Էլ. փոստ՝ azdarar@artv.am
Կայք՝ www.artv.am

«ԱՐՄՆՅՈՒԶ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 36 81 44
Էլ. փոստ՝ armnewstv@rambler.ru
Կայք՝ www.armnews.am

«Հ3» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 11) 70 07 02, 70 07 03
Էլ. փոստ՝ info@h3tv.am
Կայք՝ www.h3tv.am

«ԱՐԱՐԱՏ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 72 22
Էլ. փոստ՝ ararattv@yahoo.com
Կայք՝ www.ararat-tv.am

«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 46 85, 58 76 30
Էլ. փոստ՝ info@dar21.tv
Կայք՝ www. dar21.am

«Ա-ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 49 33 34, 44 52 38
Էլ. փոստ՝ info@atv.am
Կայք՝ www.atv.am

«ՄԻՐ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հիմնադիր՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության
Հայաստանի մասնաճյուղ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 65 41
Էլ. փոստ՝ http://am.mir24.tv

ԱՌՅԱՆՑ ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՍԻՎԻԼՆԵՏ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ.՝ (374 10) 50 01 19, (374 94) 80 07 54
Էլ. փոստ՝ info@civilitasfoundation.org
Կայք՝ www.sivilnet.am

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻ ՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 40 49
Էլ. փոստ՝ liberty@liberty.am
Կայք՝ www.azatutyun.am

«Ա1+» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 58 54 27, 56 16 18
Էլ. փոստ՝ a1plus@a1plus.am, info@a1plus.am
Կայք՝ www.a1plus.am

«ԲՈՒՆ ԹԻ ՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հեռ.՝ (374 10) 22 82 62, (374 77) 11 00 27
Էլ. փոստ՝ tv.boon@yahoo.com
Կայք՝ www.boon.am

ՀՀ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ

Բացի հանրապետական սփռումից ՀՀ հանրային ռադիոն ունի նաև արբանյակային, ինչպես նաև՝ 107.7 ՄՀց հաճախականությամբ հեռարձակում:

Հեռ./Ֆաքս՝ (374 10) 55 11 43, 55 45 40, 55 20 91, 55 46 00
Էլ. փոստ՝ news@armradio.am
Կայք՝ www.armradio.am

«ՎԵՄ»

Հեռարձակման հաճախականությունը՝ 91.1 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 88 70, 58 52 49
Էլ. փոստ՝ vem@vem.am, info@vem.am
Կայք՝ www.vem.am

«ԼՐԱՏՎԱԿԱՆ ՌԱԴԻՈ»

Հեռարձակման հաճախականությունը՝ 106.5 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 12 73
Կայք՝ www.impuls.am

«ՍՊՈՒՏՆԻԿ-ԱՐՄԵՆԻԱ»

Հեռարձակման հաճախականությունը՝ 106.0 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 53 80 58
Էլ. փոստ՝ info@cityfm.am
Կայք՝ www.cityfm.am

«ԱԶԱՏ ԵՎՐՈՊԱ/ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»

Տարածաշրջանային միջազգային ռադիոկայան (ԱՄՆ)
Կենտրոնակայանը՝ Պրահա, Չեխիա
Երևանյան բյուրո
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 40 49
Էլ. փոստ՝ liberty@liberty.am
Կայք՝ www.azatutyun.am

«ԻՄ ՌԱԴԻՈ»
Հեռարձակման հաճախականությունը՝ 103.8 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 55 11 43, 55 45 40, 55 20 91, 55 46 00
Էլ. փոստ՝ news@armradio.am
Կայք՝ www.armradio.am

«ՌԱԴԻՈ ՀԱՅ»
Հեռարձակման հաճախականությունը՝ 104.1 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 56 00 00, 52 98 68
Էլ. փոստ՝ haifm@haifm.am
Կայք՝ www.radiohay.am

«ՎԱՆ»
Հեռարձակման հաճախականությունը՝ 103.0 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 54 00 01, 54 00 02, 57 99 99
Էլ. փոստ՝ radiovan@netsys.am
Կայք՝ www.radiovan.fm

«ԵՐԵՎԱՆ»
Հեռարձակման հաճախականությունը՝ 101.9 ՄՀց:
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 55 10 12
Էլ. փոստ՝ info@erevanfm.am
Կայք՝ www.arradio.am

«ՀԱՅ ՖՄ 105.5»
Հեռարձակման հաճախականությունը՝ 105.5 ՄՀց
Հեռ./Ֆաքս՝ (374 10) 52 98 68, 65 00 00
Էլ. փոստ՝ haifm@haifm.am
Կայք՝ www.hayfm.am

Բովանդակություն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ 3
Դաս 1. Ներածություն 6
Դաս 2. Կադր և տեսաշար, մոնտաժ 6
Դաս 3. Տեսաշարի և ձայնաշարի համադրություն, սցենար 7
Դաս 4. 8
Դաս 5. Հեռուստատեսային հարցազրույց 9
Դաս 6. Հեռուստատեսային հարցազրույց 10
Դաս 7. 11
Դաս 8. Նորությունների չափորոշիչները 11
Դաս 9. 12
Դաս 10. Իրադարձային ռեպորտաժ 13
Դաս 11. 13
Դաս 12. Թեմատիկ ռեպորտաժ 14
Դաս 13. 15
Դաս 14. Հատուկ ռեպորտաժ 15
Դաս 15. Ինֆոզվարճանք 15
Դաս 16. 16
ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ
Դաս 1. Նորությունների թողարկում 17
Դաս 2. Հաղորդավար-մեկնաբանի աշխատանքը տաղավարում 18
Դաս 4. Ակնարկ (դիմանկարային, ճանապարհորդական) 18
Դաս 5. 19
Դաս 6. 19
Դաս 7. 20
Դաս 8. 20
Դաս 9. 21
Դաս 10. 22
Դաս 11. 22
Դաս 12. 22
Դաս 13. 23
Դաս 14. 23

Դաս 15. 23
Դաս 16. Միջանկյալ ստուգում 2. 23
Մամուլ
Օրաթերթեր 25
Եռօրյա թերթեր 26
Շաբաթաթերթեր 27
Ամսագրեր 29
Առցանց մամուլ 29
Լրատվական գործակալություններ 31
Մամուլի ակումբներ 32
Մասնագիտական կազմակերպություններ 33
Հայաստանի պետական մարմինների մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների հեռախոսահամարներն ու էլեկտրոնային փոստի հասցեները 36
ՀՀ հեռուստաընկերություններ 41
ՀՀ ռադիոընկերություններ 44

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՀԵՌՈՒՍՏԱԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 3:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1